



Երևանի կենդանաբանական այգու կենդանիներն արդեն ունեն իրենց բուսական գնդակները



Վերջերս Երևանի կենդանաբանական այգին կենդանիների համար արտերկրից 8 այսպես կոչված բուսական գնդակներ է ձեռք բերել: Այս հատուկ գնդակները հանդիսանում են խաղալիքներ Ասիական փղի, գետաձիու Ամուրյան վագրերի, հովազի, ընձառյուծի, արջերի և այլ կենդանատեսակների համար: Բուսական գնդակները պատրաստված են այնպիսի նյութից, որն անվնաս է կենդանիների համար:



Արդեն մեկ և կես տարի է, ինչ Երևանի կենդանաբանական այգում իրականացվում է կենդանիների զբաղվածության ծրագիր, որի շրջանակներում էլ ձեռք բերվեցին բուսական գնդակները: Այս ծրագրի արդյունքում այգու կենդանիների վարքն ավելի է ակտիվացել: Այգու աշխատակիցները փորձում են տարբեր կերպ կազմակերպել կենդանիների զբաղվածությունը: Այս կերպ փորձ է արվում կենդանիների վարքն ավելի մոտեցնել բնությանը:

Յուրաքանչյուր կենդանու համար զբաղվածության տարբեր ձևեր են կիրառվում: Ցանկացած կենդանու, թռչնի, սողունի մոտ 3 շաբաթը մեկ անգամ են կրկնվում նույն խաղերը, որպեսզի նրանք երկար ժամանակ տրամադրեն իրենց կերի հայթայթման համար՝ կատարելով մտավոր և ֆիզիկական աշխատանք:

Ավելացնենք, որ կենդանիների զբաղվածությունը և մասնագետների որակավորման բարձրացումը մասն են այն պարտադիր ծրագրերի, որոնք իրականացվում են միայն կարող ենք Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) լիարժեք անդամ դառնալ: Ներկայումս Երևանի կենդանաբանական այգու EAZA թեկնածու-անդամ լինելը մեծ հնարավորություն է ընձեռում օգտվելու միջազգային ահռելի ցանցից և մեծ գիտելիքներ ստանալու՝ Կենդանաբանական այգու պլանավորում և կառավարում, էկոլոգիական տեսակների պահպանում և վերարտադրում, կենդանիների կենսապայմանների բարելավում, կենդանիների զբաղվածություն, էկոլոգիական կրթության իրականացում և այլ թեմաներով, ինչն էլ այսօր իրականացվում է տնօրինության և աշխատակազմի կողմից:

Երևանի կենդանաբանական այգին հանձնեց մրցանակներ



Մարտի 11-ին մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ 5-րդ Համահայկական նկարչական մրցույթի և 3-րդ Դիմակահանդես-շքերթի արդյունքների ամփոփման արարողությունը: Այս մրցույթների իրականացման հարցում իր ուրույն դերն ունի Երևանի կենդանաբանական այգին:

Այս ունեղ և հետաքրքրաշարժ միջոցառման կազմակերպիչն էր Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) իր գլխավոր գործընկերոջ՝ ՎիվաՄեյ-ՄՍՍ ընկերության հետ համատեղ:

Երևանի կենդանաբանական այգու գիտամեթոդական բաժնի վարիչ Հռիփսիմե Նաչատրյանը հաղթողներին հանձնեց այգու կողմից սահմանված մրցանակները:

Այգու առաջին մրցանակին արժանացավ Արփի Յեսայանը, 8 տարեկան, Երևան: մրցանակն իր մեջ ներառում էր 1 տարվա խնամակալություն (ծնողի հետ միասին), հատուկ էքսկուրսիա այգու տնօրենի և մասնագետների ուղեկցությամբ, ինչպես նաև կենդանաբանական այգու հուշանվերների հավաքածու:

Երկրորդ մրցանակը շնորհվեց 12-ամյա Նվարդ Մանուկյանին, ով քաղաք Մասիսից էր: Նա արժանացավ կես տարի Կենդանաբանական այգի այցելելու անվճար հնարավորության (ծնողի հետ միասին), 1 անվճար այցելության հնարավորություն դառնկերների հետ, այգու հուշանվերների հավաքածու և էքսկուրսիա այգու մասնագետների ուղեկցությամբ:



Երրորդ մրցանակին արժանացավ 13-ամյա Անասի Դեր-Հակոբյանը՝ մեծ Բրիտանիայից, ով նույնպես կես տարի անվճար կենդանաբանական այգի այցելելու հնարավորություն ունեցավ (ծնողների հետ միասին), այգու կողմից կատանա այգու հուշանվերների հավաքածու և հատուկ էքսկուրսիա՝ մասնագետների ուղեկցությամբ:

Նման միջոցառումները շատ կարևոր են և կրելու են շարունակական բնույթ:

Ընդարձակվում և բարելավվում են Երևանի կենդանաբանական այգու կանաչ տարածքները



Երևանի կենդանաբանական այգին ոչ միայն վայր է, որտեղ կարելի է հանդիպել վայրի կենդանիների, այլ նաև էկո-կրթության կենտրոն, որն ուղղված է հարավկովկասյան կենսաբազմազանության ուսումնասիրությանը: Այս համատեքստում բուսական աշխարհը կարևոր դեր ունի: Այգու բարեկարգման նախագծում իր ուրույն դերն ունի նաև կանաչ տարածքների ընդլայնումը, որն ընթանում է կենդանիների կենսապայմանների բարելավմանը զուգահեռ:

Արդեն 2012 թվականին որոշ մեծ ծառեր, որոնք աճում են այգու չօգտագործվող տարածքներում, փորվել և տեղափոխվել են կենդանիների ազատավանդակներ, օրինակ՝ եղևիկի ազատավանդակ: Նոր ծառերը ոչ միայն ազատավանդակների վիզուալ բարելավման համար են, այլ նաև ստեղծում են բնական միջավայր կենդանիների համար: Ավելին, ամռան շրջին կենդանիները կարող են իրենց հանգիստը վայելել ծառերի ստվերի տակ: 2013 թվականին նախատեսված է տեղափոխել որոշ մեծ ծառեր, որոնք աճում են այգու լճի մոտակայքում, որպեսզի դրանք նույնպես օգտագործվեն ազատավանդակների համար:

Առաջիկա ամիսների ընթացքում կանաչապատման ծրագրեր նախատեսված են նաև այգու բարձրադիր և ուղղաձիգ հատվածներում: Տարիներ առաջ ծառեր են տնկվել այդ տարածքներում, սակայն ոռոգման համակարգի բացակայության պատճառով դրանք չեն գոյատևել:

2013 թվականին ոռոգման համակարգի տեղադրումը այգու համար առաջնային խնդիր է: Համաձայն նախագծի՝ այգին կընդլայնի և կօգտագործի ուղղաձիգ, քարքարոտ տարածքները նոր ազատավանդակների կառուցման ինչպես նաև կանաչապատ տարածքների զարգացման համար: Այս տարի որոշ նոր ծառատեսակներ, թփեր և ծաղկի տեսակներ կտնկվեն այգում: Կկազմակերպվեն նաև հանրային ծառատունկեր: Արդեն գարնանը ավելի քան 12 ծառատեսակներ և 150 թփերի տեսակներ կգարդարեն այգու կանաչ տարածքները:



Քայլ առ քայլ լուծվում են նաև ակվատեռարիումի խնդիրները



Երևանի կենդանաբանական այգին ունի 4 բաժին. սմբակավորների, գիշատիչների, թռչունների, ինչպես նաև ակվատեռարիումի բաժին, որտեղ բնակվում են 19 տեսակի 34 օձ, 4 տեսակի 6 մողես, 3 տեսակի 38 կրիա, որից 10-ը, ի դեպ, նախորդ տարվա ձագերն են:

70 տարեկան կենդանաբանական այգու բոլոր բաժինները, ներառյալ ակվատեռարիումի բաժինը չեն կարող խնդիրներ չունենալ, սակայն դրանք քայլ առ քայլ լուծվում են ստանում: Դեռ նախորդ տարի գարնանն այս բաժնի համար շատ կարևոր հարց լուծվեց. տեղադրվեց օդափոխության բաժնի համար գլխավոր խնդիրներից մեկն էր: օդն ակվատեռարիումում մաքուր է, անկախ մարդկանց քանակի և եղանակի:

Նոր համակարգ, ինչը տարիներ շարունակ այս Ծնորհիվ օդափոխության նոր համակարգի՝ օդն ակվատեռարիումում մաքուր է, անկախ մարդկանց քանակի և եղանակի:

2013-ին, ակվատեռարիումում լուծվել է ևս մեկ կարևոր խնդիր. տեղադրվել են ինֆրակարմիր լամպեր: Սրանք կարելի է ասել փոխարինում են արևին՝ տալով նույն ճառագայթումը և էներգիան: Ինֆրակարմիր լամպերին կից տեղակայվել են նաև էներգախնայող ցերեկային լամպեր, որոնք թույլ են տալիս ակվատեռարիումի խոնավ պայմաններում շատ երկար ծառայել և ավելի գրավիչ դարձնել ակվատեռարիումն այցելուների համար:

Այսօր ակվատեռարիումի բաժնին ավելի անվտանգ և ապահով է դարձել այցելուների համար: Նախորդ տարի լուծվել է նաև սողունների տեռարիումների հրակայուն ապակիների խնդիրը. կտրվող և վտանգավոր ապակիները փոխարինվել են նորով՝ այդպիսով ապահովելով այցելուների անվտանգությունը:

Արտերկրից ձեռք են բերվել նաև հատուկ գործիքներ, ինչը բավականին հեշտացրել է աշխատանքը սողունների հետ: Հետագայում նախատեսվում է ավելացնել նաև դրանց թիվը:

Ցանկանում եք դառնալ Երևանի կենդանաբանական այգու ընկերը.

Միանալով «Կենդանաբանական այգու ընկերներ» ասոցիացիային կարող եք այգին շատ ավելի հաճելի ու գրավիչ վայր դարձնել:

Եթե ցանկանում եք միանալ «Կենդանաբանական այգու ընկերներ» ասոցիացիային և ակտիվորեն աջակցել Երևանի կենդանաբանական այգու բարեկարգմանը, ապա կարող եք գրել մեզ zoofriends@yerevanzoo.am էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել 010-555-209 հեռախոսահամարով: